

տիկ էր, դիրքին չէ մեկէն ի մեկ մերժել այն ենթադրութիւնն՝ որ օգտքարերը — գէթ մասամբ — մեր երկրէն յառաջ եկած կը համարի:

Գտածոք ըսինք, որովհետեւ երկնային ուրիշ մարմիններէ ալ կրնան մեր երկրին երկնաքարեր իյնալ, երբ ասոնք իրենց հայրենիքէն պոյսիսի արագութեամբ հեռանան, որ մեր երկրին օտարութեան շրջանը մտնեն: Եթէ լուսնէն մարմին մը բաժնուէր որ մէկ վայրկեանի մէջ միայն 1700—2300 մետր արագութեամբ յառաջանար, այլ եւս չէր կրնար լուսին դառնալ, այլ անպատճառ իրը երկնաքար մեր երկրին վրայ կ'իյնար:

Ուրեմն «երկնաքար» քարերուն ծագումը վերը պարզուած նոր ենթադրութեան համեմատ այլեւայլ է: Այն քարերն՝ որոնց բաղադրութիւնն երկրին հանքերուն բաղադրութիւնէն ամենեւին չի տարբերի, մեր մոլորակէն առած են իրենց ծագումն եւ իրենց ակամայ ճամբորդութիւնէն ետ կը գտնան: Գէտալ օգտքարերն, ի մասնաւորի դոլոմ արագութեամբ երկրին վրայ ինկողք, կրնան մեր լուսնէն ծագած ըլլալ. մինչդեռ մեծ արագութեամբ ինկողներն աստղէ մըն են: Յամենայն դէպս օգտքարերն՝ որ աստղներէ ալ յառաջ եկած ըլլան, ուրիշ բան չեն բայց թիժ օտար մարմիններ՝ որ հեռաւոր եւ երկրին ասեռ ճամբորդութեամբ մեր երկիրը հասած են. վստահ մեր երկրին ամենէն աւելի մերձաւոր աստղէն ալ մեր երկրին հասնելու համար եօթը միլիոն տարւան կը կարօտի — ուստիսման ժամանակ եւ սակայն անվախճան յաւիտենականութեան քով ինչ է այս ժամանակը:



ՐԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ

ՓՈՐՁԱՆԵՐ ԵՒ ՓՈՐՁԱՆԵՐԻ ԹԻՒՆ

Փորձանքը զժպչի է, փորձառութիւնը դառն է. բայց անոնց պառուղն առաջընարար է:

Ուրախ փորձառութիւն՝ այնչափ կոտորատ: Աշխարհի թէ նաեւ նոյնչափ վատասակ ըլլար:

Սլուսու թէ դժբախտ է ով որ քանի մը փորձն չէ առած. բայց դուռն մի ուղեր ամէն քանի փորձն առնուլ: Սիւրբ Նստուած պարսկ սեղ ուրիշներուն գլուխը փորձանք կը բերէ:

*

Լոյսորովին գիրք ի փորձանայ չինք կրնար ըլլալ. նոյնպէս ասոր հակառակ՝ ի դէպ չէ որ ամբողջ կեանքերնիս փորձանայ անծայր շղթայ մը կազմէ. քիչ մը ասկէ, քիչ մը անկէ՝ տանելի եւ օգտաւէտ կ'ըլլայ: «Լուսքինութիւնն ի միջին կայանայ»:

*

Փորձանքը հուր փորձող է, որ կը փորձէ՝ թէ ով մաքուր ոսկի է, եւ ով երկաթ ժանգաֆար:

*

Փորձառութիւնը փորձանայ թուոյն հետ միշտ ուղիղ համեմատութեամբ չ'առ, ճիւղ: Իմաստունը, առաքինին կ'օգտուին, իսկ անմիտն, հեղզն ու վճռն . . . Ո՛հ, անցէ, անտէս ըրէք զանոնք:

*

Փորձանքը թշնամի մըն է, որ մեր չկարծած ատեն կը յարձակի, կը վերաւորէ ու փախչելով աներեւոյթ կ'ըլլայ: Սեղի միայն կը քնայ վէրքը դարմանել, որ չըլլայ թէ մահացու հիւանդութեան փոխուի, ուրով բազումք կորնին:

*

Փորձանքը ծածուկ գեղարեղ (cosmétique) մ'ունի, որով գլուռն սեւ մաղը տարածամ կը ճերմկընէ:

Նայ դամկին ալ գլուխը փորձանք եկած ատեն՝ «Չ'առ Գլուռն» կ'ըսէ:

*

Լուսքանչիւր փորձառութիւն համարեալ թէ ոսկի օղակ մըն է: Աշխարհ տարեաց շարքին մէջ՝ օղակ օղակի կցելով՝ պարանոցէն կախուած ծանր ծանր շղթայ մը կը հիւսնեն, զոր բարձր ի գլուխ կրելու համար տոկուն զօրութիւն պէտք է:

*

Փորձանքաւոր մարդուն օղնութեան հասիր՝ որ չըլլայ թէ ի սպառ կործանի. յաղթութեան պարծանաց եւ աւարին կէսն յետոյ քեզի կ'իյնայ:


Հ. Ռ. Պ.

Թ Ղ Յ Ա Վ Տ Ո Ւ Թ Ր Ո Ն

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ԾԻՐԻՄԸ

Իբրեւ Տիգրան Երկիրարեան, իւր Մոսկիին մէջ այս տարի, Պետրոս Դուրեանի մահուան 28^{րդ} տարեգարձը յիշատակելով, այդ վաղաժեռ բանաստեղծն անգամ մը եւս կը կենդանացնէ մեր ամենուս սրտին մէջ, այդու քաղցր պարտականութիւն մը յիս կը վստէ, ներկայացընելու անոր ցուրտ շիրիմը, զոր շաւտանց լուսանկարել տուած եմ, եւ զոր պիտի հրատարակէի Դուրեանի մահուան 25 ամեակին, եթէ՛ այդ անթիւ կատարելի գրական հանդէսը չարգելուէր այն ատեն տիւր պատահաներով:

Երախտագիտական հաւատսիք մըն է, զոր կ'ուզեմ յայտնել այսօր Պետրոս Դուրեանի անմահ յիշատակին, այդ աննման քերթողին, զոր շատ լաւ ճանչցած եմ եւ մանկութեանս, եւ որ եղաւ իմ աւաղին վարժապետս, իմ աւաղին վարժապետս այս, գաս մ'իսկ առած չէ նա ինձ, բայց իւր մահուանէն յետոյ իւր հեշտաբուրք քնարովը, ինքը նախ պատճառ եղած է ինձ, որ կենանքիս մէջ ունեցած եմ երբեք բանաստեղծութիւններ կարդալու, բանաստեղծութիւններ գրելու բուն տենչ մը:



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ԾԻՐԻՄԸ

Պետրոս Դուրեան, իւր շիրիմը կանգնած է ինքն իսկ, իւր գրչովը, զոր 1872ին անմահացուց Խոսկիւտարի ընթերցասիրացնկերութիւնը, հրատարակելով անոր Տոհմը ու Թաղերէնութիւնները: Դուրեանի գործոց հրատարակութեան արդիւնքովն է, որ շինուած է անոր շիրիմը, զոր կը տեսնենք հաս:

Գրեթէ երկուք ու կէս մէտր բարձրութիւն ունի այն, եւ է համակ կռնայ. կանգնած է յաւ-

կիւտարի Ազգ. գերեզմանատան մէջ, Պաղար Պաշիմեմ պողոտային ճիշտ վրան, այնպէս որ ամէն անցորդ կը տեսնէ զայն գրեթէ եւ կանգ կ'առնու անոր վերտառութիւնը կարդալու: Գարմարեայ փառաւոր պատուանդանի մը վրայ կը բարձրանայ այն, բաղկացեալ երկու կոորէ. առաջին մասը՝ մէկ մէտր եւ քիչ աւելի, իւր վրան կը կրէ բուն շիրիմը չորս քարգնտակ տաքերով:

Մէկ մէտր բարձրութեան հազիւ կը հասնի այս երկրորդը, որ քառակուսի՝ կը վերջանայ բրգաձեւ, աւանդով չորս

երես, որուն արեւելեանը կը կրէ հետեւեալ Ցապանագիրը.

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԻԴԻՆ

Ասա հանգչի մարմին Պետրոսի Դուրեան, Որ քրքանամայ էլ ի գերեզման. Երկամագործի սա ծընաւ որդի, Բանաստեղծ թրուաւ ի կենաց աստի:

Ի տարժաժմու Յունկար քրքանի Հազար ութ հարիւր եօթանասներկի.